

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

-Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով 280 անգամ հանդես են եկել տարբեր միջնորդություններով կադաստրի տարածքային ստորաբաժանումներում, նոտարական գրասենյակում ոստիկանության բաժանումներում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում և այլ կազմակերպություններում:

-Կատարել են համայնքի բնակիչ հանդիսացող 210 անձանց ընդունելություն, բնարկել բոլոր դիմումները, բողոքները, առաջարկությունները, որոնցից 175-ին տրվել է դրական լուծում:

-Աշխատակազմի միջոցով կատարել ենք համայնքի 5 ընտանիքների ընտանեկան նպաստի համակարգում փաստագրման աշխատանքները, ինչպես նաև ազգաբնակչության ամենամյա սեռա-տարիքային հաշվառման աշխատանքները:

-Հրավիրել են «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 1 նիստ, բնարկվել են համայնքի անապահով և ծնողագուրկ երեխաների իրավունքների պաշտպանության, դաստիարակության, ուսման հետ կապված հարցեր, տրամադրվել է դրամական օգնություն:

-Փաստաթղթերի պատճեններ, քաղվածքներ, տեղեկանքներ են տրամադրել համայնքի 270 բնակիչների: Օժանդակել են գյուղացիական տնտեսություններին բանկերից ֆինանսական կազմակերպություններից գյուղատնտեսական վարկեր ստանալու նպատակով: Արձակել են 8 կարգադրություն, բնդունել 65 որոշում, հրավիրել և վարել են համայնքի ավագանու 12 նիստ:

Ֆինանսների բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմել և ավագանու նիստի հաստատմանն են ներկայացրել Եղասխախունի համայնքի 2016 թվականի բյուջեի նախագիծը, ինչպես նաև աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային գրույքաչափերը, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Ապահովել են բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրումը, տնօրինել բյուջեի միջոցները՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը, ստորագրել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

-Կազմակերպել և աշխատակազմի միջոցով իրականացրել են տարեկան կտրվածքով նախատեսված.

գույքահարկի գանձումը 2 224 600 դրամ

հողի հարկի գանձումը 6 125 000 դրամ

վարձակալական հողի վարձը 155 000 դրամ

խմելաջրի վարձավճար 1 940 000 դրամ,

Տեղական տուրքը 90 000 դրամ

Աշխատակազմի միջոցով կազմել և ավագանու նիստի հաստատմանն են

ներկայացրել Եղասխախունի համայնքի 2016 թվականի բյուջեի մեջ կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները:

Պաշտպանության բնագավառում

- Աջակցել են զարնանային և աշնանային գորակոչերին, զինկոմիսարիատից ստացված 28 ծանուցագրերը հանձնվել է գորակոչիկներին, ապահովել նրանց ներկայանալը զինկոմիսարիատ, որոնցից 18 մեկնել են ժամկետային ծառայության: Աշխատանքներ են տարվել հետախուզման մեջ գտնվող 5 գորակոչիկների գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ, որպեսզի ոչ ոք չխուսափի զինվորական ծառայությունից:

Հասնապատասխան որոշումներով ստեղծվել է համայնքի արտակարգ իրավիճակներում ազգայնակչության տարահանման հանձնաժողով և հաստատվել է համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:

-Կազմակերպել և անցկացրել ենք համայնքի ազգաբնակչության 2 սեմինար դասընթաց և 2 գործնական վարժանք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի արտակարգ իրավիճակներում բնակչության տեղահանման սխեմայի սահմաններում. Համապատասխան կարգադրություններով և որոշումներով վերանայել և համալրվել են նախատեսված ջոկատների և օղակների կազմերը, անցկացվել է անհրաժեշտ տրանսպորտային, և այլ նյութական պարագաների տեխնիկական և ստուգման աշխատանքները: Աջակցել ևմ պատերազմի վետերանների սոցիալական առույցապահական և այլ բնույթի խնդիրների լուծմանը մայիսի 9 -ի օրվա կապակցությամբ Երիտասարդների հայրենասիրական դաստիարակության ծրագրի շրջանակում համայնքի ավագանու թույլտվությամբ անցկացրել ևմ միջոցառում հրավիրելով պատերազմի վետերաններին և արցախի ազատամարտիկներին, հանձնել ենք նվերներ և դրամական պարգևներ :

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Կազմել և համայնքի ավագանու հաստատմանն են ներկայացրել համայնքի հողերի օգտագործման, գոտիավորման սխեմաներն ու համայնքի գլխավոր հատակագիծը. Համայնքի ավագանու սահմանած կարգով և սահմանած վարձավճարների համապատասխան որոշումներ են կայացրել համայնքի սեփականություն հանդիսացող 9 հա գյուղնշանակության վարկյահողը համայնքի բնակիչներին վարձակալությամբ հասկացնելու մասին. մրցույթում հաղթող ճանաչված բնակիչների հետ կնքել ենք հողի վարձակալությամբ պայմանագրեր:

Ապահովել ևմ համայնքի հողատարածքների օգտագործումը և շահագործումը ըստ դրանց նպատակային և գործառնական նշանակության, ձեռնարկել յնչակվող հողերի բերրի շերտի պահպանման, աղակալումից Էռոզիայից զերծ պահելու համար Կրճատվել են չնշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի քանակը շուրջ 5 % ով ներկայումս չնշակվող գյուղնշանակության հողատարածքներ գրեթե չկան. Ամենօրյա աջակցություն ևմ ցուցաբերել համայնքում իրականացված շինարարական աշխատանքներին մասնավորապես միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման, համայնքի տարածքով անցնող միջակատական ավտոմայրուղու, համայնքային ևնթակալության ավտոճանապարհի, համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի ջրատարների կառուցապատման, հիմնանորոգման, մասնակի վերանորոգման աշխատանքներին: Ամմիջական վերանակողություն ևմ սահմանել համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքի պահպանման նկատմամբ . ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողերի պահպանմանը, դրանց օգտագործմանը ըստ նպատակային նշանակության մատուցվել և մասնագիտական խորհրդատվական ծառայություն, նվազել է չնշակվող հողատարածքների քանակը և համայնքում առկա 530 հա. գյուղնշանակության

հողերից 2016 թվականին չմշակվող հողատարածք գրեթե չի մնացել. Կազմվել և համայնքի ավագանուն և կադաստրի ստորաբաժանման հաստատման և ներկայացրել համայնքի 2016 թվականի հողային հաշվեկշիռը :

Աշխատակազմի միջոցով կազմակերպել եմ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման աշխատանքները, կազմել համապատասխան փաստաթղթերը և ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը .

Կոմունալ տնտեսության և բարեկեցության բնագավառում

-Համայնքի միջոցների հաշվին ամիսը 4 անգամ կատարվել է համայնքի տարածքի աղբահեռացման աշխատանքները, հնարավորինս բարեկարգվել են բավականին թվով փողոցներ, մեծ սառը ավազապատվել են:

-Կատարել ենք համայնքի խմելաջրի խողովակաշարի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքները, ամենօրյա վերահսկողություն է իրականացվում խմելաջրի նպատակային օգտագործմանը և խնայողությանը. ազգաբնակչությանը ապահովել ենք շուրջօրյա խմելաջրով :

-Կարծել են գյուղի գերեզմանատան պահակ, որը միաժամանակ իրականացնում է մաքրման և բարեկարգման աշխատանքները, լուծված է խմելաջրի և լուսավորման հարցը: Աջակցություն են ցուցաբերել համայնքում գազաֆիկացման աշխատանքները կատարելիս. այս տարի գազաֆիկացվել է ևս 8 առանձնատուն

Տրանսպորտի և կապի բնագավառում

Ապահովել են «Վիվա Սել-ՄՍՍ» ընկերության շարժական գրասենյակի պարբերաբար այցելումը համայնք, որը տեղում տարաբնույթ ծառայություններ և մատուցում բաժանորդներին, հեռախոսահամարների փաթեթային համակարգում ընդգրկել ենք ևս 16 բնակիչների, որի սակագինը 8 անգամ էժամ է սովորականից:

-Օժանդակել ենք համայնքում առկա տրակտորների և այլ գյուղտեխնիկայի վերանորոգման աշխատանքներին, որպեսզի գյուղատնտեսական աշխատանքները իրականացվեն ժամանակին: Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ՄԻԳ > կողմից վերանորոգվել է 2 կմ երկաթուղային համայնքային ենթակառուցվածքի ավտոմոբիլային ճանապարհը, տեղադրվել սահմանանիշերը, ուղեցույցները և բթնեկության կանոնների նշանները շինարարական աշխատանքները կատարելիս ամենօրյա աջակցություն և հսկողություն ենք իրականացրել:

Առևտրի և սպասարկման բնագավառում

Կատարել ենք թվով 3 առևտրի, կենցաղային սպասարկման օբյեկտների ստուգման աշխատանքները, կազմել տեղեկանքները և արձանագրությունները որոնցից մեկական օբյեկտ տրվել ևն ռաճապատասխան կազմակերպություններին և անհատ ձեռնարկներին: Կազմել ենք կիսամյակային և տարեկան հաշվետվությունները և ներկայացրել Արմավիրի մարզպետարան:

-Տրվել է ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի 2 թույլտվություն. իրականացրել ենք համայնքում գործող առևտրի կետերի ստուգման աշխատանքները, կազմել համապատասխան արձանագրություններն ու տեղեկանքները:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում

-Մշտական օժանդակություն ենք ցուցաբերել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության աշխատակիցներին հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու, կանխելու նպատակով:

-Ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ մշակել և իրականացրել ենք միջոցառումներ հատկապես երիտասարդների մոտ գողության, խուլիգանության, թմրամոլության և այլ տեսակի իրավախախտումների կանխարգելման նպատակով:

Գայրէջարքար ուսելիչանության աշխատակիցներից տեղեկություններ ենք ստացել համայնքում կատարվող իրավախախտումների վերաբերյալ. ձևափակել անհրաժեշտ միջոցառումներ: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության եմ ենթարկել համայնքի 8 բնակիչներին:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

-Համայնքի երիտասարդների համար 2 անգամ կազմակերպել ենք համերգ-միջոցառում, տրամադրել համերգի տոմսերը

Համայնքի միջոցների հաշվին ստեղծել ենք հայկական ժողովրդական և ազգագրական պարի խմբակ, որտեղ սովորում են համայնքի շուրջ 28 երեխաներ:

Աջակցել ենք միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը, դպրոց հաճախելուց խուսափող երեխաների և նրանց ծնողների հետ տարել բացատրական աշխատանքներ, հետևել ուսման որակի և կրթամակարդակի բարձրացմանը. Ամեն կերպ օժանդակել ենք միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքների, հիմնովին փոխվել են տանիքը, պատուհանները, դռները, կատարվել են ներքին և արտաքին հարդրման աշխատանքները ինչը իր հերթին նպաստում է ուսման և կրթամակարդակի բարձրացմանը: Դպրոցի աշակերտներին համայնքի բյուջեից տրամադրել ենք Ամանորի կապակցությամբ համերգի տոմսեր և նվերներ: Միջնակարգ դպրոցում գործում է նախակրթական ուսումնական 2 խմբակ, որից մեկը գործում է համայնքի բյուջեի միջոցների հաշվին.

Առողջապահության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում

-Օժանդակել ենք համայնքի բուժկետի բնականոն գործունեությանը, լուծել էլեկտրաէներգիայի և ջեռուցման խնդիրները, բնակիչները ստանում են որակյալ մատչելի բուժօգնություն: Կազմակերպել արևելյան մարտարվեստի պարապմունքներ շուրջ 18 պատանիների համար, որոնցից շատերը մարզային, հանրապետական մրցաշարերում գրավել են մրցանակային տեղեր և իմ կողմից արժանացել դրամական խրախուսանքի


Գյուղատնտեսության բնագավառում

-Աշխատակազմի միջոցով աջակցել ենք համայնքի բոլոր հողօգտագործող տնտեսություններին շուրջ 550 հա. ցանքատարածությունների վրա գարնանային և աշնանային գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելիս և իրականացնելիս, մասնավորապես սերմացուների, մատակարարման գործում,

գյուղտեխնիկայով ապահովելու հարցում, կատարվել է որակյալ աշխատանքներ, հացահատիկի բերքահավաքը, բանջարաբուստանաին կուլտուրաների բերքահավաքը և իրացումը: Կատարել ենք համայնքում առկա բոլոր տեսակի անասունների և թռչունների պրոֆիլակտիկ բուժման և վակցինացման աշխատանքները՝ Հողագործությանը զբաղվող մենատնտեսների համար կազմակերպել են դասընթացներ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ «Հայաստան» գրասենյակի կողմից ֆինանսավորվող «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում, ևս 18 մենատնտես ստացել են որակյալ ուսուցում և վկայական՝ Կատարել ենք համայնքում առկա բոլոր տեսակի անասունների և թռչունների սևուտաբխարային հաշվառման աշխատանքները, կազմել բոլոր հաշվետվությունները և ներկայացրել վիճակագրական գործակալությանը: Համայնքում ուռզման ցրի սակավության պատճառով չկր ոտոզվում շուրջ 20 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Այդ նպատակով միջոցառությամբ հանդես ենք եկել «Ջրային տնտեսության պետական կոմիտեի ԾԻԳ գրասենյակում» համայնքում թվով 1 հատ խորքային հորի հորատման համար, ներկայումս աշխատանքները ավարտվել են և հողօգտագործողները հնարավորություն կունենան կատարել զարնանացանք վերոհիշյալ հողատարածքների վրա: Բացի այդ հորատվող հորերի սպասարկման համար կառուցվել է 2 կմ. -ից ավելի բևտոնե կիսախողովակներով ջրանցք, որպեսի բացառվի ոտոզման ջրի կոյուստը: Աջակցել և խիստ հակողություն ենք սահմանել համայնքում առկա բոլոր տեսակի անասունների վակցինացման և պրոֆիլակտիկ բուժման աշխատանքները կատարելիս: Աշխատակազմի միջոցով կատարել ենք համայնքի բոլոր ցանքատարածությունների, բազմակա տնկարքների և այլ մշակաբույսերի տարածքների և միջին բերրաստվության բանակի հաշվառման աշխատանքները, կազմել համապատասխան հաշվետվությունները: Համայնքի շուրջ 50 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա կատարել ենք մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ ցինկի ֆոսֆորի պատրաստու կով: Կազմակերպել են զարնանք տնտեսություններին տրամադրված սերմացուների, պարարտանյութերի բաշխման և հաշվառման աշխատանքները, մատուցել ենք մասնագիտական խորհրդատվական ծառայություններ բոլոր հողօգտագործողներին մշակման, հիվանդությունների դեմ պայքարի, հողատարածությունների ոտոզման աշխատանքները կատարելիս:

Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի

ղեկավար՝



Արմեն Ավետիսյան



17.01.2017թ.